Հայաստանի Հանրապետության Անշարժ գույքի շուկան 2018 թվականի հունիսին (վերլուծություն)

ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ

REAL PROPERTY CADASTRE

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2018 թվականի հունիսին

(վերլուծություն)

Անշարժ գույքի շուկայի վերլուծությունը կատարվել է հիմք ընդունելով 2018 թվականի հունիս ամսվա ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների վերաբերյալ տվյալները, անշարժ գույքի առաջարկի շուկայից հավաքագրված տեղեկությունները և մասնագիտացված կազմակերպության կողմից անշարժ գույքի գների վերաբերյալ տրամադրված վերլուծական տվյալները:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.1.1 2018 թվականի հունիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 13741 իրավունքների պետական գրանցման գործարքներ:

2009-2018 թվականների հունիս ամսվա անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները ներկայացված են Գծապատկեր 1.1-1-ում.

Գծապատկեր 1.1-1



1.1.2 Հանրապետությունում 2018 թվականի հունիսին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 38.1%, իսկ առավել ցածրը՝ Վայոց Ձորի՝ մարզում 1.8%:

Գծապատկեր 1.1-2-ում և Գծապատկեր 1.1-3-ում ներկայացված են 2018 թվականի հունիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Գծապատկեր 1.1-2



Գծապատկեր 1.1-3



Աղյուսակ 1.1-1-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2017 թվականի հունիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.1-1

	2017 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի մայիս
Երևան	4816	8.8%	5240	14.1%	4594
Արագածոտն	533	47.8%	788	-5.3%	832
Արարատ	836	18.9%	994	-10.8%	1114
Արմավիր	856	-1.4%	844	-19.2%	1044
Գեղարքունիք	723	23.1%	890	-16.8%	1070
Լոռի	763	67.8%	1280	17.8%	1087
Կոտայք	1565	16.8%	1828	-1.1%	1849
Շիրակ	629	-3.8%	605	21.5%	498
Սյունիք	466	13.3%	528	-12.4%	603
Վայոց Ձոր	321	-22.4%	249	-24.3%	329
Տավուշ	491	0.8%	495	-4.8%	520
Հանրապետություն	11999	14.5%	13741	1.5%	13540

2018 թվականի հունիսին հանրապետությունում գրանցված գործարքների քանակը 2018 թվականի մայիսի համեմատ աճել է 1.5%-ով, իսկ 2017 թվականի հունիս ամսվա համեմատ՝ 14.5 %-ով: Երևան քաղաքում 2018 թվականի հունիսին գրանցված գործարքների քանակը 2018 թվականի մայիսի համեմատ աճել է 14.1 %-ով, իսկ 2017 թվականի հունիս ամսվա համեմատ՝ 8.8 %-ով: Մարզերի քաղաքային բնակավայրերում 2018 թվականի հունիսին գրանցված գործարքների քանակը 2018 թվականի մայիսի համեմատ նվազել է 2.4 %-ով, 2017 թվականի հունիս ամսվա համեմատ՝ աճել 11.9 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2018 թվականի հունիսին գրանցված գործարքների քանակը 2018 թվականի մայիսի համեմատ նվազել է 6.7 %-ով, 2017 թվականի հունիս ամսվա համեմատ աճել ՝ 23.2 %-ով:

1.1.3 Հանրապետությունում 2018 թվականի հունիսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 38.6 % գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.9 % օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-4-ում և Գծապատկեր 1.1-5-ում ներկայացված են 2018 թվականի հունիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ տեսակների.

Գծապատկեր 1.1-4



Գծապատկեր 1.1-5



Աղյուսակ 1.1-2-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2017 թվականի հունիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.1-2

Հ/Հ	Գործարքի տեսակ	2017 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի մայիս
1	**Օտարում**	4480	18.4%	5305	3.9%	5106
1ա	Առուվաճառք	3294	19.9%	3948	7.4%	3677
1բ	Նվիրատվություն	1169	-7.8%	1078	-3.6%	1118
1գ	Փոխանակում	17	-47.1%	9	-18.2%	11
1դ	Օտարման այլ տեսակ		-	270	-10.0%	300
2	**Վարձակալություն**	596	42.6%	850	2.8%	827
3	**Գրավադրում**	2211	-1.1%	2186	-2.6%	2244
4	**Ժառանգություն**	1774	25.6%	2229	2.7%	2171
5	**Օրինականացում**	105	23.8%	130	-0.8%	131
6	**Առաջնային գրանցում**	2041	5.4%	2151	2.1%	2106
7	**Պետգր. /վերագրանցում/**	792	12.4%	890	-6.8%	955
	Ընդամենը գործարք	11999	14.5%	13741	1.5%	13540

Աղյուսակ 1.1-3-ում ներկայացված է հանրապետությունում 2018 թվականի հունիսին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գործարքի տեսակների.

Աղյուսակ 1.1-3

Գործարքիտեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում
1	**Օտարում**	5305	38.6%	2265	43.2%	42.7%	1269	36.8%	23.9%	1771	35.1%	33.4%
1ա	Առուվաճառք	3948	28.7%	1807	34.5%	45.8%	949	27.5%	24.0%	1192	23.6%	30.2%
1բ	Նվիրատվություն	1078	7.8%	419	8.0%	38.9%	275	8.0%	25.5%	384	7.6%	35.6%
1գ	Փոխանակում	9	0.1%	2	0.0%	22.2%	6	0.2%	66.7%	1	0.0%	11.1%
1դ	Օտարման այլ տեսակ	270	2.0%	37	0.7%	13.7%	39	1.1%	14.4%	194	3.8%	71.9%
2	**Վարձակալություն**	850	6.2%	422	8.1%	49.6%	258	7.5%	30.4%	170	3.4%	20.0%
3	**Գրավադրում**	2186	15.9%	1193	22.8%	54.6%	544	15.8%	24.9%	449	8.9%	20.5%
4	**Ժառանգություն**	2229	16.2%	547	10.4%	24.5%	452	13.1%	20.3%	1230	24.4%	55.2%
5	**Օրինականացում**	130	0.9%	44	0.8%	33.8%	43	1.2%	33.1%	43	0.9%	33.1%
6	**Առաջնային գրանցում**	2151	15.7%	503	9.6%	23.4%	657	19.0%	30.5%	991	19.6%	46.1%
7	**Պետգր. /վերագրանցում/**	890	6.5%	266	5.1%	29.9%	230	6.7%	25.8%	394	7.8%	44.3%
	Ընդամենը գործարք	13741	100.0%	5240	100.0%	38.1%	3453	100.0%	25.1%	5048	100.0%	36.7%

1.1.4 Հանրապետությունում 2018 թվականի հունիսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 33.0 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 2.4 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-6-ում և Գծապատկեր 1.1-7-ում ներկայացված են 2018 թվականի հունիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.1-6



Գծապատկեր 1.1-7



Աղյուսակ 1.1-4-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2017 թվականի հունիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.1-4

Հ/Հ	Գույքի տեսակ	Հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները				
		2017 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի մայիս
1	բնակարան	3938	12.6%	4436	13.1%	3921
2	անհատական բնակելի տուն	2503	12.4%	2813	2.6%	2743
3	արտադրական նշ. շին	389	-15.2%	330	-6.5%	353
4	հասարակական նշ. շին.	1114	6.1%	1182	-5.4%	1250
5	ավտոտնակ	428	5.1%	450	11.9%	402
6	հող	3627	24.9%	4530	-7.0%	4871
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	2103	28.2%	2695	-12.5%	3079
	Ընդամենը	11999	14.5%	13741	1.5%	13540

Աղյուսակ 1.1-5-ում ներկայացված է հանրապետությունում 2018 թվականի հունիսին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների:

Աղյուսակ 1.1-5

Գույքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում
1	բնակարան	4436	32.3%	3169	60.5%	71.4%	1180	34.2%	26.6%	87	1.7%	2.0%
2	անհատական բնակելի տուն	2813	20.5%	703	13.4%	25.0%	722	20.9%	25.7%	1388	27.5%	49.3%
3	արտադրական նշ. շին	330	2.4%	104	2.0%	31.5%	109	3.2%	33.0%	117	2.3%	35.5%
4	հասարակական նշ. շին.	1182	8.6%	695	13.3%	58.8%	343	9.9%	29.0%	144	2.9%	12.2%
5	ավտոտնակ	450	3.3%	307	5.9%	68.2%	119	3.4%	26.4%	24	0.5%	5.3%
6	հող	4530	33.0%	262	5.0%	5.8%	980	28.4%	21.6%	3288	65.1%	72.6%
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	2695	19.6%	36	0.7%	1.3%	365	10.6%	13.5%	2294	45.4%	85.1%
	Ընդամենը գործարք	13741	100.0%	5240	100.0%	38.1%	3453	100.0%	25.1%	5048	100.0%	36.7%

1.2 Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.2.1 Երևան քաղաքում 2018 թվականի հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն՝ 20.7 %, իսկ ցածրը 0.3 % Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 1.2-1-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 1.2-1



Աղյուսակ 1.2-1-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2017 թվականի հունիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.2-1

Վարչական շրջան	2017 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի մայիս
Դավթաշեն	164	33.5%	219	6.3%	206
Էրեբունի	388	-14.7%	331	5.1%	315
Աջափնյակ	453	36.6%	619	20.9%	512
Ավան	305	-24.6%	230	4.5%	220
Արաբկիր	743	1.2%	752	18.6%	634
Կենտրոն	865	25.2%	1083	22.5%	884
Մալաթիա-Սեբաստիա	484	16.5%	564	29.4%	436
Քանաքեռ-Զեյթուն	304	16.1%	353	2.3%	345
Շենգավիթ	538	-5.4%	509	5.2%	484
Նոր-Նորք	494	3.8%	513	4.9%	489
Նորք-Մարաշ	45	8.9%	49	4.3%	47
Նուբարաշեն	33	-45.5%	18	-18.2%	22
Երևան	4816	8.8%	5240	14.1%	4594

1.2.2 Երևան քաղաքում 2018 թվականի հունիսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 43.2% գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.8% օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-2-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների.

Գծապատկեր 1.2-2



Աղյուսակ 1.2-2-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին Երևան քաղաքում իրականացված գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2017 թվականի հունիս ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 1.2-2

Հ/Հ	Գործարքի տեսակը	2017 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի մայիս
1	**Օտարում**	1854	22.2%	2265	26.5%	1791
1ա	Առուվաճառք	1379	31.0%	1807	30.4%	1386
1բ	Նվիրատվություն	461	-9.1%	419	13.6%	369
1գ	Փոխանակում	14	-85.7%	2	0.0%	2
1դ	Օտարման այլ տեսակ		-	37	8.8%	34
2	**Վարձակալություն**	299	41.1%	422	3.9%	406
3	**Գրավադրում**	1320	-9.6%	1193	1.7%	1173
4	**Ժառանգություն**	530	3.2%	547	10.5%	495
5	**Օրինականացում**	21	2.1 անգամ	44	33.3%	33
6	**Առաջնային գրանցում**	368	36.7%	503	16.4%	432
7	**Պետգր. /վերագրանցում/**	424	-37.3%	266	0.8%	264
	Ընդամենը գործարք	4816	8.8%	5240	14.1%	4594

1.2.3 Երևան քաղաքում 2018 թվականի հունիսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 60.5 % գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 2.0 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-3-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.2-3



Աղյուսակ 1.2-3-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2017 թվականի հունիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.2-3

Հ/Հ	Գույքի տեսակ	Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները				
		2017 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի մայիս
1	բնակարան	2743	15.5%	3169	19.9%	2644
2	Անհատական բնակելի տուն	728	-3.4%	703	15.1%	611
3	արտադրական նշ. շին	117	-11.1%	104	-23.0%	135
4	հասարակական նշ. շին.	666	4.4%	695	-3.9%	723
5	ավտոտնակ	288	6.6%	307	8.5%	283
6	հող	274	-4.4%	262	32.3%	198
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	70	-48.6%	36	80.0%	20
	Ընդամենը	4816	8.8%	5240	14.1%	4594

1.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.3.1 Մարզերում 35.8 % գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 1.0 % օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-1-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների.

Գծապատկեր 1.3-1



Աղյուսակ 1.3-1-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2017 թվականի հունիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.3-1

Հ/Հ	Գործարքի տեսակ	2017 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի մայիս
1	**Օտարում**	2626	15.8%	3040	-8.3%	3315
1ա	Առուվաճառք	1915	11.8%	2141	-6.5%	2291
1բ	Նվիրատվություն	708	-6.9%	659	-12.0%	749
1գ	Փոխանակում	3	133.3%	7	-22.2%	9
1դ	Օտարման այլ տեսակ		-	233	-12.4%	266
2	**Վարձակալություն**	297	44.1%	428	1.7%	421
3	**Գրավադրում**	891	11.4%	993	-7.3%	1071
4	**Ժառանգություն**	1244	35.2%	1682	0.4%	1676
5	**Օրինականացում**	84	2.4%	86	-12.2%	98
6	**Առաջնային գրանցում**	1673	-1.5%	1648	-1.6%	1674
7	**Պետգր. /վերագրանցում/**	368	69.6%	624	-9.7%	691
	Ընդամենը գործարք	7183	18.3%	8501	-5.0%	8946

1.3.2 Մարզերում 2018 թվականի հունիսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 50.2 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.7 % ավտոտնակների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-4-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.3-4



Աղյուսակ1.3-4-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2017 թվականի հունիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.3-4

Հ/Հ	Գույքի տեսակ	Մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները				
		2017 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի մայիս
1	բնակարան	1195	6.0%	1267	-0.8%	1277
2	անհատական բնակելի տուն	1775	18.9%	2110	-1.0%	2132
3	արտադրական նշ. շին	272	-16.9%	226	3.7%	218
4	հասարակական նշ. շին.	448	8.7%	487	-7.6%	527
5	ավտոտնակ	140	2.1%	143	20.2%	119
6	հող	3353	27.3%	4268	-8.7%	4673
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	2033	30.8%	2659	-13.1%	3059
	Ընդամենը	7183	18.3%	8501	-5.0%	8946

2. ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

2.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված օտարման գործարքների վերլուծություն

2.1.1 2018 թվականի հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 5305 օտարման գործարք, որը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 38.6%-ը:

2009-2018 թվականների հունիս ամսվա անշարժ գույքի օտարման գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 2.1-1-ում.

Գծապատկեր 2.1-1



2.1.2 Հանրապետությունում 2018 թվականի հունիսին անշարժ գույքի նկատմամբ գրանցված օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 42.7%, իսկ առավել ցածրը՝ Վայոց Ձորի մարզում 1.7%:

Գծապատկեր 2.1-2-ում և Գծապատկեր 2.1-3-ում ներկայացված են 2018 թվականի հունիսին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ Երևանի և մարզերի.

Գծապատկեր 2.1-2



Գծապատկեր 2.1-3



Աղյուսակ 2.1-1-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2017 թվականի հունիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 2.1-1

	2017 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի մայիս
Երևան	1854	22.2%	2265	26.5%	1791
Արագածոտն	186	47.3%	274	-21.5%	349
Արարատ	340	0.6%	342	-26.0%	462
Արմավիր	336	-6.5%	314	-23.0%	408
Գեղարքունիք	279	-28.0%	201	-18.3%	246
Լոռի	295	74.2%	514	8.9%	472
Կոտայք	535	44.7%	774	4.3%	742
Շիրակ	220	-5.9%	207	5.6%	196
Սյունիք	171	-4.7%	163	-8.9%	179
Վայոց Ձոր	109	-17.4%	90	-26.2%	122
Տավուշ	155	3.9%	161	15.8%	139
Հանրապետություն	4480	18.4%	5305	3.9%	5106

2018 թվականի հունիսին հանրապետությունում գրանցված օտարման գործարքների քանակը 2018 թվականի մայիսի համեմատ աճել է 3.9 %-ով, 2017 թվականի հունիս ամսվա համեմատ՝ 18.4 %-ով, Երևան քաղաքում 2018 թվականի մայիսի համեմատ աճել է 26.5 %-ով, 2017 թվականի հունիս ամսվա համեմատ՝ 22.2 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում 2018 թվականի մայիսի համեմատ նվազել է 0.7 %-ով, 2017 թվականի հունիս ամսվա համեմատ՝ աճել 7.8 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2018 թվականի մայիսի համեմատ նվազել է 13.1 %-ով, 2017 թվականի հունիս ամսվա համեմատ աճել ՝ 22.2 %-ով:

2.1.3 Հանրապետությունում 2018 թվականի հունիսին օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 33.8 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 0.9 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 2.1-4-ում և Գծապատկեր 2.1-5-ում ներկայացված են 2018 թվականի հունիսին հանրապետությունում անշարժ գույքի օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 2.1-4



Գծապատկեր 2.1-5



Աղյուսակ 2.1-2-ում ներկայացված է հանրապետությունում 2018 թվականի հունիսին անշարժ գույքի օտարման գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի:

Աղյուսակ 2.1-2

Հ/Հ	Գույքի տեսակ	Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	բնակարան	2137	40.3%	1561	68.9%	73.0%	544	42.9%	25.5%	32	1.8%	1.5%
2	անհատական բնակելի տուն	836	15.8%	234	10.3%	28.0%	224	17.7%	26.8%	378	21.3%	45.2%
3	արտադրական նշ. շին.	49	0.9%	13	0.6%	26.5%	13	1.0%	26.5%	23	1.3%	46.9%
4	հասարակական նշ. շին.	258	4.9%	151	6.7%	58.5%	81	6.4%	31.4%	26	1.5%	10.1%
5	ավտոտնակ	233	4.4%	168	7.4%	72.1%	58	4.6%	24.9%	7	0.4%	3.0%
6	հող	1792	33.8%	138	6.1%	7.7%	349	27.5%	19.5%	1305	73.7%	72.8%
6ա	ա/թ գյուղ նշ.հող	1001	18.9%	11	0.5%	1.1%	97	7.6%	9.7%	893	50.4%	89.2%
	Ընդամենը գործարք	5305	100.0%	2265	100.0%	42.7%	1269	100.0%	23.9%	1771	100.0%	33.4%

Գծապատկեր 2.1-6-ում և Աղյուսակ 2.1-3-ում ներկայացված են 2018 թվականի հունիսին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ գործարքի տեսակների.

Գծապատկեր 2.1-6



Աղյուսակ 2.1-3

Օտարում	Երևան	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ	Մարզերը	Ընդամենը
Առուվաճառք	1807	212	272	240	121	289	592	139	99	84	93	2141	3948
Նվիրատվություն	419	61	69	66	54	58	173	64	62	6	46	659	1078
Փոխանակում	2	1	1	0	0	2	3	0	0	0	0	7	9
Օտարման այլ տեսակ	37	0	0	8	26	165	6	4	2	0	22	233	270
Ընդամենը	2265	274	342	314	201	514	774	207	163	90	161	3040	5305

3. ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

3.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.1.1 2018 թվականի հունիսին հանրապետությունում գրանցվել է անշարժ գույքի առուվաճառքի 3948 գործարք :

2009-2018 թվականների հունիս ամսվա անշարժ գույքի առուվաճառքի գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 3.1-1-ում.

Գծապատկեր 3.1-1



3.1.2 Հանրապետությունում 2018 թվականի հունիսին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 45.8 %, իսկ առավել ցածրը՝ Վայոց Ձորի մարզում 2.1 %:

Գծապատկեր 3.1-2-ում և Գծապատկեր 3.1-3-ում ներկայացված են 2018 թվականի հունիսին հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ Երևանի և մարզերի.

Գծապատկեր 3.1-2



Գծապատկեր 3.1-3



Աղյուսակ 3.1-1-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2017 թվականի հունիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.1-1

	2017 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի մայիս
Երևան	1379	31.0%	1807	30.4%	1386
Արագածոտն	137	54.7%	212	-6.6%	227
Արարատ	263	3.4%	272	-27.9%	377
Արմավիր	269	-10.8%	240	-27.9%	333
Գեղարքունիք	218	-44.5%	121	-2.4%	124
Լոռի	218	32.6%	289	25.1%	231
Կոտայք	406	45.8%	592	6.7%	555
Շիրակ	157	-11.5%	139	3.0%	135
Սյունիք	100	-1.0%	99	-22.7%	128
Վայոց Ձոր	60	40.0%	84	-2.3%	86
Տավուշ	87	6.9%	93	-2.1%	95
Հանրապետություն	3294	19.9%	3948	7.4%	3677

2018 թվականի հունիսին հանրապետությունում գրանցված առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի մայիսի համեմատ աճել է 7.4 %-ով, 2017 թվականի հունիս ամսվա համեմատ՝ 19.9 %-ով, Երևան քաղաքում 2018 թվականի մայիսի համեմատ աճել է 30.4 %-ով, 2017 թվականի հունիս ամսվա համեմատ՝ 31.0 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում 2018 թվականի մայիսի համեմատ աճել է 3.0 %-ով,, 2017 թվականի հունիս ամսվա համեմատ՝ 5.0 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2018 թվականի մայիսի համեմատ նվազել է 13.0%-ով, 2017 թվականի հունիս ամսվա համեմատ աճել ՝ 17.9 %-ով:

3.1.3 Հանրապետությունում 2018 թվականի հունիսին առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 43.0% գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 0.8% արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.1-4-ում և Գծապատկեր 3.1-5-ում ներկայացված են 2018 թվականի հունիսին հանրապետությունում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածություններն ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 3.1-4



Գծապատկեր 3.1-5



Աղյուսակ 3.1-2-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2017 թվականի հունիս ամիսների նկատմամբ

Աղյուսակ 3.1-2

Հ/Հ	Գույքի տեսակ	Հանրապետությունում առուվաճառքի գործարքների քանակները				
		2017 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի մայիս
1	բնակարան	1264	34.2%	1696	33.9%	1267
2	անհատական բնակելի տուն	410	21.7%	499	2.3%	488
3	արտադրական նշ. շին	46	-28.3%	33	-45.9%	61
4	հասարակական նշ. շին.	189	8.5%	205	1.0%	203
5	ավտոտնակ	194	6.2%	206	12.6%	183
6	հող	1191	9.9%	1309	-11.3%	1475
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	714	-9.0%	650	-21.1%	824
	Ընդամենը	3294	19.9%	3948	7.4%	3677

3.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.2.1 Երևան քաղաքում 2018 թվականի հունիսին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն՝ 20.3 %, իսկ առավել ցածրը՝ 0.3 % Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.2-1-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 3.2-1



Աղյուսակ 3.2-1-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2017 թվականի հունիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.2-1

Վարչական շրջան	**2017 թվականի հունիս**	**փոփոխումը**	**2018 թվականի հունիս**	**փոփոխումը**	**2018 թվականի մայիս**
Դավթաշեն	54	48.1%	80	14.3%	70
Էրեբունի	80	12.5%	90	-7.2%	97
Աջափնյակ	130	55.4%	202	48.5%	136
Ավան	129	-24.0%	98	24.1%	79
Արաբկիր	236	11.0%	262	41.6%	185
Կենտրոն	239	61.9%	387	40.2%	276
Մալաթիա-Սեբաստիա	139	35.3%	188	44.6%	130
Քանաքեռ-Զեյթուն	75	57.3%	118	2.6%	115
Շենգավիթ	122	28.7%	157	17.2%	134
Նոր-Նորք	172	22.1%	210	41.9%	148
Նորք-Մարաշ	7	42.9%	10	0.0%	10
Նուբարաշեն	8	-37.5%	5	-16.7%	6
Երևան	1379	31.0%	1807	30.4%	1386

3.2.2 Երևան քաղաքում 2018 թվականի հունիսին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 70.1% գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 0.6 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.2-2-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր 3.2-2



Աղյուսակ 3.2-2-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2017 թվականի հունիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.2-2

Հ/Հ	Գույքի տեսակ	Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակները				
		2017 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի մայիս
1	բնակարան	893	41.9%	1267	46.5%	865
2	անհատակ անբնակելի տուն	122	22.1%	149	3.5%	144
3	արտադրական նշ. շին	17	-41.2%	10	-44.4%	18
4	հասարակական նշ. շին.	117	0.9%	118	-1.7%	120
5	ավտոտնակ	145	4.8%	152	16.9%	130
6	հող	85	30.6%	111	1.8%	109
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	12	-16.7%	10	2.0 անգամ	5
Ընդամենը		1379	31.0%	1807	30.4%	1386

3.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

Մարզերում 2018 թվականի հունիսին առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 56.0% գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.1% արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.3-1-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր 3.3-1



Աղյուսակ 3.3-1-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2017 թվականի հունիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.3-1

Հ/Հ	Գույքի տեսակ	Մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակները				
		2017 թվականի հունիս	փոփոխությունը	2018 թվականի հունիս	փոփոխությունը	2018 թվականի մայիս
1	բնակարան	371	15.6%	429	6.7%	402
2	անհատական բնակելի տուն	288	21.5%	350	1.7%	344
3	արտադրական նշ. շին	29	-20.7%	23	-46.5%	43
4	հասարակական նշ. շին.	72	20.8%	87	4.8%	83
5	ավտոտնակ	49	10.2%	54	1.9%	53
6	հող	1106	8.3%	1198	-12.3%	1366
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	702	-8.8%	640	-21.9%	819
Ընդամենը		1915	11.8%	2141	-6.5%	2291

3.4 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.4.1 Հանրապետությունում 2018 թվականի հունիսին իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 1696 գործարք: 2018 թվականի հունիսին հանրապետությունում գրանցված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի մայիսի համեմատ աճել է 33.9%-ով, 2017 թվականի հունիս ամսվա համեմատ՝ 34.2 %-ով:

Գծապատկեր 3.4-1-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևանի և մարզերի.

Գծապատկեր 3.4-1



Աղյուսակ 3.4-1-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2017 թվականի հունիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.4-1

	2017 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի մայիս
Երևան	893	41.9%	1267	46.5%	865
Արագածոտն	9	0.0%	9	-30.8%	13
Արարատ	30	-6.7%	28	-37.8%	45
Արմավիր	66	-36.4%	42	13.5%	37
Գեղարքունիք	18	11.1%	20	17.6%	17
Լոռի	62	24.2%	77	5.5%	73
Կոտայք	88	43.2%	126	18.9%	106
Շիրակ	52	30.8%	68	58.1%	43
Սյունիք	29	13.8%	33	-19.5%	41
ՎայոցՁոր	6	83.3%	11	-21.4%	14
Տավուշ	11	36.4%	15	15.4%	13
Հանրապետություն	1264	34.2%	1696	33.9%	1267

3.4.2 Երևան քաղաքում 2018 թվականի հունիսին իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 1267 գործարք, 2018 թվականի հունիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի մայիսի համեմատ աճել է 46.5 %-ով, իսկ 2017 թվականի հունիս ամսվա համեմատ՝ 41.9 %-ով:

Երևան քաղաքում 2018 թվականի հունիսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն 19.5%, իսկ առավել ցածրը՝ 0.3% Նուբարաշեն վարչական շրջաններում: Նորք-Մարաշ վարչական շրջանում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարք չի գրանցվել:

Գծապատկեր 3.4-2-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 3.4-2



Աղյուսակ 3.4-2-ում ներկայացված են 2018 թվականի հունիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1 մ^2 մակերեսի հաշվարկով՝ ըստ վարչական շրջանների և տարածագնահատման գոտիների.

Աղյուսակ 3.4-2

Վարչական շրջան	2017 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի մայիս
Կենտրոն միջին	451500	17.4%	530000	2.9%	515000
Կենտրոն 1գոտի		N/A	642200	1.4%	633200
Կենտրոն 2 գոտի		N/A	482500	1.2%	476700
Կենտրոն 3 գոտի		N/A	435900	1.4%	429700
Կենտրոն 4 գոտի		N/A	N/A	N/A	N/A
Կենտրոն 5 գոտի		N/A	335000	-1.2%	339200
Արաբկիր միջին	341050	8.2%	368950	1.5%	363500
Արաբկիր 3գոտի		N/A	420600	-1.7%	428000
Արաբկիր 4գոտի		N/A	381500	1.7%	375300
Արաբկիր 5գոտի		N/A	340500	1.9%	334200
Արաբկիր 6գոտի		N/A	222000	N/A	N/A
Քանաքեռ-Զեյթուն միջին	268000	3.0%	276100	0.8%	274000
Քանաքեռ-Զեյթուն 4գոտի		N/A	334600	1.4%	330000
Քանաքեռ-Զեյթուն 5գոտի		N/A	316000	1.5%	311200
Քանաքեռ-Զեյթուն 6գոտի		N/A	295600	1.2%	292000
Քանաքեռ-Զեյթուն 7գոտի		N/A	222500	1.1%	220100
Նոր-Նորք միջին	230000	4.3%	240000	-0.8%	241900
Նոր-Նորք 6 գոտի		N/A	256300	-1.7%	260800
Նոր-Նորք 7 գոտի		N/A	223600	1.1%	221200
Էրեբունի միջին	237000	6.4%	252050	-0.2%	252500
Էրեբունի 5 գոտի		N/A	292100	0.2%	291650
Էրեբունի 6 գոտի		N/A	264000	-0.8%	266100
Էրեբունի 7 գոտի		N/A	N/A	N/A	N/A
Էրեբունի 8 գոտի		N/A	200100	-0.4%	201000
Շենգավիթ միջին	240000	5.8%	254000	0.6%	252400
Շենգավիթ 5 գոտի		N/A	274800	0.1%	274500
Շենգավիթ 6 գոտի		N/A	268500	1.4%	264800
Շենգավիթ 7 գոտի		N/A	237200	0.1%	236900
Շենգավիթ 8 գոտի		N/A	201000	0.5%	200000
Դավթաշեն միջին	250000	15.3%	288200	1.7%	283400
Դավթաշեն 7 գոտի		N/A	288050	1.6%	283400
Աջափնյակ միջին	226250	10.4%	249700	-0.2%	250100
Աջափնյակ 4 գոտի		N/A	272000	-0.4%	273000
Աջափնյակ 6 գոտի		N/A	272750	0.5%	271400
Աջափնյակ 7 գոտի		N/A	228000	1.3%	225000
Աջափնյակ 8 գոտի		N/A	N/A	N/A	N/A
Մալաթիա-Սեբաստիա միջին	230000	4.3%	239800	0.8%	238000
Մալաթիա –Սեբաստիա 6 գոտի		N/A	286000	-1.4%	290000
Մալաթիա –Սեբաստիա 7 գոտի		N/A	235600	0.3%	235000
Մալաթիա –Սեբաստիա 8 գոտի		N/A	201000	0.5%	200000
Ավան միջին	248000	3.8%	257300	0.2%	256700
Ավան 6 գոտի		N/A	210200	1.1%	208000
Ավան 7 գոտի		N/A	257700	-1.7%	262100
Նուբարաշեն միջին	156000	6.4%	166000	-1.2%	168100
Նուբարաշեն 9		N/A	166000	-1.2%	168100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2018 թվականի հունիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ^2 մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2018 թվականի մայիսի համեմատ՝ աճել են 0.9%-ով, իսկ 2017 թվականի հունիսի համեմատ՝աճել 8.5%-ով:

Ծանոթություն

Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները տրված են ըստ ՀՀ կառավարության 17.04.2003թ. N470-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման գոտիների:

*Մալաթիա-Սեբաստիա համայնքի 6-րդ գոտում ընդգրկված է Ծիծեռնակաբերդի խճուղին

*Ավան համայնքի 7-րդ գոտում ընդգրկված է Ծարավ Աղբյուրի փողոցը

*Աջափնյակ համայնքի 8-րդ գոտում ընդգրկված է Վահագնի թաղամասը

Վերոնշյալ փողոցներն ու թաղամասերն էական ազդեցություն են թողնում տվյալ գոտում ձևավորվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական գների վրա:

*N/A-նշված գոտում միջին գնի հաշվարկման համար 1 տարվա ընթացքում բավարար քանակով գործարքներ չեն գրանցվել

3.4.3 2018 թվականի հունիսին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 429 բնակարան, ընդ որում՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների 4.0%-ը գրանցվել է գյուղական բնակավայրերում:

2018 թվականի հունիսին մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի մայիսի համեմատ աճել է 6.7%-ով, իսկ 2017 թվականի հունիս ամսվա համեմատ՝ 15.6 %-ով:

Գծապատկեր 3.4-3-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը.

Գծապատկեր 3.4-3



Աղյուսակ 3.4-3-ում ներկայացված են 2018 թվականի հունիսին մարզերի քաղաքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1մ^2 մակերեսի հաշվարկով.

Մարզը	Քաղաքը	2018 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի մայիս
Արագածոտն	Աշտարակ	111500	-1.1%	112700
	Ապարան	87000	0.7%	86400
	Թալին	70800	0.4%	70500
Արարատ	Արտաշատ	101500	0.3%	101200
	Մասիս	102300	2.1%	100200
	Վեդի	93000	-0.1%	93100
	Արարատ	81200	1.5%	80000
Արմավիր	Վաղարշապատ	122500	2.0%	120100
	Արմավիր	92000	1.8%	90400
	Մեծամոր	64200	0.2%	64050
Գեղարքունիք	Սևան	84000	-1.8%	85500
	Գավառ	54200	-2.5%	55600
	Մարտունի	121000	0.0%	121000
	Վարդենիս	57200	-1.4%	58000
	Ճամբարակ	39700	0.0%	39700
Լոռի	Վանաձոր	79600	0.5%	79200
	Ստեփանավան	67600	0.0%	67600
	Սպիտակ	90500	0.0%	90500
	Ալավերդի	49000	-0.4%	49200
	Տաշիր	59000	-2.2%	60300
	Թումանյան	22700	0.0%	22700
	Շամլուղ	28300	0.0%	28300
	Ախթալա	34500	3.3%	33400
Կոտայք	Աբովյան	156800	1.0%	155200
	Նոր Հաճն	127100	0.7%	126200
	Բյուրեղավան	98000	0.9%	97100
	Եղվարդ	121500	0.0%	121500
	Հրազդան	58100	0.7%	57700
	Ծաղկաձոր	286000	0.2%	285400
	Չարենցավան	70600	1.6%	69500
Շիրակ	Գյումրի	92500	0.4%	92100
	Արթիկ	65000	-1.6%	66050
	Մարալիկ	52000	0.6%	51700
Սյունիք	Գորիս	136300	0.9%	135150
	Կապան	106800	1.3%	105400
	Սիսիան	83100	-1.1%	84000
	Մեղրի	100500	-1.3%	101800
	Քաջարան	100200	0.0%	100200
	Դաստակերտ	21400	0.0%	21400
Վայոց ձոր	Վայք	87050	1.2%	86000
	Եղեգնաձոր	121100	0.9%	120000
	Ջերմուկ	109100	0.0%	109100
Տավուշ	Դիլիջան	106000	1.4%	104500
	Իջևան	116500	0.7%	115700
	Բերդ	94000	-1.6%	95500
	Նոյեմբերյան	57600	2.9%	56000
	Այրում	57000	-2.1%	58200

Ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2018 թվականի հունիսին մարզերի քաղաքներում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների՝ 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2018 թվականի մայիսի համեմատ աճել են 0.2%-ով:

3.5 Հողերի առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.5.1 Հանրապետությունում 2018 թվականի հունիսին իրականացվել է հողերի առուվաճառքի 1309 գործարք: 2018 թվականի հունիսին հանրապետությունում գրանցված հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի մայիսի համեմատ նվազել է 11.3 %-ով, 2017 թվականի հունիս ամսվա համեմատ՝ աճել 9.9 %-ով:

Գծապատկեր 3.5-1-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին հանրապետությունում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևանի և մարզերի.

Գծապատկեր 3.5-1



Աղյուսակ 3.5-1-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին հանրապետությունում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2017 թվականի հունիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.5-1

	2017 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի հունիս	փոփոխումը	2018 թվականի մայիս
Երևան	85	30.6%	111	1.8%	109
Արագածոտն	96	70.8%	164	-10.9%	184
Արարատ	167	-3.0%	162	-37.7%	260
Արմավիր	152	-9.9%	137	-39.1%	225
Գեղարքունիք	159	-59.1%	65	-8.5%	71
Լոռի	113	35.4%	153	2.1 անգամ	74
Կոտայք	226	50.4%	340	4.3%	326
Շիրակ	71	-49.3%	36	-34.5%	55
Սյունիք	33	-12.1%	29	-40.8%	49
ՎայոցՁոր	47	27.7%	60	3.4%	58
Տավուշ	42	23.8%	52	-18.8%	64
Հանրապետություն	1191	9.9%	1309	-11.3%	1475

3.5.2 Երևան քաղաքում 2018 թվականի հունիսին իրականացվել է հողերի առուվաճառքի 111 գործարք: 2018 թվականի հունիսին Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի մայիսի համեմատ աճել է 1.8 %-ով, իսկ 2017 թվականի հունիս ամսվա համեմատ՝ 30.6 %-ով:

Գծապատկեր 3.5-2-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին Երևան քաղաքում հողի առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 3.5-2



2018 թվականի հունիսին Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Մալաթիա-Սեբաստիա՝ 16.2 %, իսկ առավել ցածրը՝ 0.9 %՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

2018 թվականի հունիսին Երևան քաղաքում իրականացվել է հողերի առուվաճառքի 111 գործարք՝ 8.99 հա ընդհանուր մակերեսով, որոնք ըստ նպատակային նշանակության բաշխվել են հետևյալ կերպ.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 10 միավոր (0.97 հա),
- բնակելի կառուցապատման (տնամերձ) հող՝ 60 միավոր (4.18 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 39 միավոր (3.26 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 2 միավոր (0.58 հա) մակերեսով:

Երևան քաղաքում վաճառված հողերի քանակի 26.1 %-ը կամ 29 միավոր՝ 2.74 հա ընդհանուր մակերեսով, հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, իսկ 73.9 %-ը կամ 82 միավոր (6.25 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող: 2018 թվականի հունիսին Երևանում գրանցվել է վարձակալություն իրավունքի վաճառքի 2 գործարք (0.005 հա), այդ թվում կառուցապատման իրավունքի վաճառքի:

Աղյուսակ 3.7-2-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին Երևան քաղաքում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն՝ ըստ վարչական շրջանների և հողերի նպատակային նշանակության.

Աղյուսակ 3.7-2

Վարչական շրջաններ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Դավթաշեն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	10	0.51	1	0.03
Էրեբունի	0	0.00	0	0.00	1	0.09	2	0.03	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Աջափնյակ	0	0.00	0	0.00	2	0.18	1	0.15	0	0.00	0	0.00	6	0.41	7	0.30
Ավան	0	0.00	1	0.50	6	1.24	1	0.08	0	0.00	0	0.00	6	0.35	3	0.16
Արաբկիր	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.05	1	0.85
Կենտրոն	0	0.00	0	0.00	4	0.05	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.09	0	0.00
Մալաթիա-Սեբաստիա	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.34	10	0.97	0	0.00	3	0.18	3	0.71
Քանաքեռ-Զեյթուն	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.02	0	0.00	0	0.00	4	0.21	5	0.17
Շենգավիթ	0	0.00	0	0.00	1	0.01	1	0.003	0	0.00	0	0.00	5	0.22	1	0.05
Նոր-Նորք	0	0.00	0	0.00	0	0.00	4	0.03	0	0.00	1	0.08	5	0.37	3	0.03
Նորք-Մարաշ	0	0.00	0	0.00	1	0.01	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.16	2	0.30
Նուբարաշեն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.04	0	0.00
Ընդամենը	**0**	**0.00**	**1**	**0.50**	**15**	**1.58**	**13**	**0.66**	**10**	**0.97**	**1**	**0.08**	**45**	**2.59**	**26**	**2.60**

Աղյուսակ 3.7-3-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդային և ուղղակի վաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ վարչական շրջանների և հողերի նպատակային նշանակության.

Աղյուսակ 3.7-3

Վարչական շրջաններ	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					Բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								Բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Դավթաշեն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Էրեբունի	2	0.093	0	0.00	1	0.09	1	0.003	1	0.02	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.02
Աջափնյակ	1	0.12	0	0.00	1	0.12	0	0.00	2	0.21	0	0.00	0	0.00	1	0.06	1	0.15
Ավան	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	8	1.80	0	0.00	1	0.50	6	1.24	1	0.08
Արաբկիր	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Կենտրոն	3	0.01	0	0.00	3	0.01	0	0.00	1	0.04	0	0.00	0	0.00	1	0.04	0	0.00
Մալաթիա-Սեբաստիա	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	1	0.34	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.34
Քանաքեռ-Զեյթուն	1	0.02	0	0.00	0	0.00	1	0.02	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Շենգավիթ	2	0.013	0	0.00	1	0.01	1	0.003	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Նոր-Նորք	2	0.005	0	0.00	0	0.00	2	0.005	2	0.03	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.03
Նորք-Մարաշ	1	0.01	0	0.00	1	0.01	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Նուբարաշեն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Ընդամենը	**14**	**0.28**	**0**	**0.00**	**7**	**0.24**	**7**	**0.04**	**15**	**2.44**	**0**	**0.00**	**1**	**0.50**	**8**	**1.34**	**6**	**0.62**

3.5.3 Մարզերում 2018 թվականի հունիսին իրականացվել է հողերի առուվաճառքի 1198 գործարք, ընդ որում նշված առուվաճառքի գործարքների 76.8%-ը գրանցվել է գյուղական բնակավայրերում:

2018 թվականի հունիսին մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի մայիսի համեմատ նվազել է 12.3%-ով, իսկ 2017 թվականի հունիս ամսվա համեմատ՝ աճել 8.3%-ով:

Գծապատկեր 3.5-3-ում ներկայացված է 2018 թվականի հունիսին մարզերում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը.

Գծապատկեր 3.5-3



Մարզերում 2018 թվականի հունիսին հողերի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Կոտայքի ՝ 28.4 %, իսկ առավել ցածրը՝ 2.4% Սյունիքի մարզերում:

2018 թվականի հունիսին մարզերում իրականացվել է հողերի առուվաճառքի 1198 գործարք՝ 822.16 հա ընդհանուր մակերեսով, որոնք ըստ նպատակային նշանակության բաշխվել են հետևյալ կերպ.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 640 միավոր (776.79 հա),
- բնակելի կառուցապատման (տնամերձ) հող՝ 340 միավոր (28.14 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 198 միավոր (6.98 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 11 միավոր (4.62 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 6 միավոր (5.28 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 2 միավոր (0.04 հա),
- ջրային հող՝ 1 միավոր (0.31 հա) մակերեսով:

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 344.61 հա, որից 336.79 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Մարզերում վաճառված հողերի քանակի 32.0 %-ը կամ 383 միավորը (178.74 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, իսկ 68.0 %-ը կամ 815 միավորը (643.42 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող: 2018 թվականի հունիսին մարզերում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 13 գործարք (10.80 հա), այդ թվում կառուցապատման իրավունքի վաճառք:

